

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՅՆ ԲՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ (1900—1907 ԹԹ.)

Գ. Մ. ՔԵՌՅԱՆ

Ազգային հարցը եղել և մնում է Ռուսաստանի քաղաքական կուսակցությունների ծրագրերի և գործունեության ամենակարևոր օղակներից մեկը: Դա պայմանավորված է Ռուսաստանի պատմական զարգացման առանձնահատկություններով և ռուսական պետականության հաստատման յուրահատկությամբ: Եթե Արևմտյան Եվրոպայում կենտրոնացված պետությունները ձևավորվեցին որպես միազգային պետություններ¹, որից հետո միայն գաղթելով այլազգիներով քնակեցված գաղութներ, դարձան բազմազգ գաղութային կայսրություններ, ապա Ռուսական կենտրոնացված պետությունը սկզբից ևեթ ձևավորվեց որպես բազմազգ պետություն՝ իր մեջ ներառելով Պոլովժեի և Սիբիրի ժողովուրդներին, իսկ XVIII և XIX դարերում նաև Մերձբալթիկայի, Կովկասի, Միջին Ասիայի ժողովուրդներին, ինչպես նաև Ֆինլանդիան և Լեհաստանի մեծ մասը: Եթե XVIII—XIX դարերում ձևավորված գաղութային կայսրություններում գաղութատեր պետությունները (մետրոպոլիսները) միասարք էթնիկական պետություններ էին, ապա Ռուսաստանյան կայսրության մեջ հասարակ հնարավոր չէ նշել այն սահմանները, որոնք աճատում էին մետրոպոլիս գաղութներից: Իհարկե սա պայմանավորված էր նաև նրանով, որ Ռուսաստանը, ի տարբերություն եվրոպական մյուս պետությունների, այդպես էլ անդրովկիանոսյան գաղութներ չունեցավ: Բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունների դարաշրջանից հետո Արևմտյան Եվրոպան վերածվեց ազգային միասնական պետությունների կազմավորված համակարգի, իսկ XX դարի երկու համաշխարհային պատերազմները և ազգային-ազատագրական շարժումները լիովին փլուզեցին գաղութային կայսրությունները: Այս ամենի հետևանքով ազգային հարցը լիովին դուրս մղվեց արևմտաեվրոպական քաղաքական կուսակցությունների ծրագրերից, ձուլվելով մարդու իրավունքների ընդհանուր պահանջների մեջ: Այնինչ երբ 1905 թ. սկսած ռուսական առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը պարտություն կրեց, բազմազգ կայսրությունը, որի քնակչության մոտ 57 տոկոսը այլազգիներն էին կազմում, թեթևակի սասանվեց միայն, Կառավարելով իր ամբողջականությունը: Կայսրության երերումները զարկ տվեցին բուռն ազգայնական շարժումների և քնականաբար համառուսաստանյան քաղաքական կուսակցությունները, որոնք ձևավորվեցին 1900—1907 թթ. ընթացքում, չէին կարող իրենց ծրագրերում չնտցնել ազգային հարցին նվիրված դրույթներ և չմշակել այլազգիների նկատմամբ իրենց քաղաքականությունը: Բացի այս, մի շարք ազգային կուսակցություններ ստեղծվել էին ավելի վաղ և ռուսական կուսակցություններից ավելի շուտ էին սկսել պայքարը ինքնակալության դեմ: Ահա այս ամենով էր պայմանավորված այն հանգամանքը, որ Ռուսաստանի քաղաքական կուսակցությունների ծրագրերում իշխանության և ագրարային հարցերից հետո, իսկ որոշ կուսակցությունների մոտ ագրարային հարցից առաջ, դրվեց ազգային հարցը: Այն, որպես առաջնային ծրագրային դրույթ, մնաց նաև հետագայում և բուռն քննարկումների ստարկա էր հատկապես առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, երբ ազգայնականությունը պարտել էր ինչպես Ռուսաստանի, այնպես էլ եվրոպական մյուս երկրների քաղաքական մթնոլորտը: Պատերազմի տարիներին ազգային հարցը Ռուսաստանում ավելի սրվեց, որովհետև ոչ ուս ժողովուրդ-

¹ Թերևս քացառություն էին կազմում Անգլիան, որն իր աքցանների մեջ պահեց Իռլանդիան ու Օտլանդիան, և Ավստրո-Հունգարիան, որի գոյատևումը մինչև 1918 թ. պայմանավորված էր միասնական պետության մեջ մնալու ավստրիացիների և հունգարացիների շփոթմամբ, ինչպես նաև կայսրության կազմի մեջ ստնող հարավային և արևմտյան սլավոնական ժողովուրդների ազգային շարժումները Գերմանիայի և Ռուսաստանի օգնությամբ ճնշելուն:

Ների ազգային կուսակցությունները առավել ակտիվացրին իրենց գործունեությունը, շեշտը դնելով ազգային պետություն հիմնելու անհրաժեշտության քարոզչության վրա: 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից և միապետության տապալումից հետո ռուսական կուսակցությունների պայքարը իշխանության համար ավարտվեց 1917 թ. հոկտեմբերին կատարված պետական հեղաշրջումով, երբ բոլշևիկները վերցրին իշխանությունը, սակայն այն սխառեազմ վարել երկրի մյուս քաղաքական ուժերի դեմ: Դրա հետևանքը եղավ կայսրության փլուզումը, որից օգտվելով՝ ազգային պետականություն հիմնելու նախադրյալներ ունեցող մի շարք ժողովուրդներ (ֆինները, լեհերը, մերձբայթյան ու անդրկովկասյան ժողովուրդները) քաղաքականապես ինքնորոշվեցին՝ հիմնելով իրենց ազգային պետությունները: Քաղաքացիական պատերազմի ավարտից հետո Ռուսաստանում հաստատվեց միակուսակցական համակարգ: Բոլշևիկները վերացրին մյուս բոլոր քաղաքական կուսակցությունները, բայց նրանց առջև կանգնեց հետևյալ ճակատագրական հարցը. կարո՞ղ է արդյո՞ք Ռուսաստանը գոյություն ունենալ որպես միազգային պետություն և կարո՞ղ է արդյո՞ք աշխատել տնտեսությունը առանց Բաքվի նավթի, միջինասիական բամբակի, Ուկրաինայի բարածխի, մետաղի և մերձբայթյան նավահանգիստների: Պարզվեց, որ ո՛չ: Եվ նորից առաջ եկավ կայսրության վերականգնման հրամայական պահանջը, որն իր հերթին նորից առաջին պլան մղեց ազգային քաղաքականությունը: Բոլշևիկները որոշ տարածքային կորուստներով (Լեհաստան, Ֆինլանդիա, Մերձբայթիկա, Բեսարաբիա) արագորեն վերականգնեցին կայսրությունը, որն ուղեկցվում էր համաշխարհային պրոլետարական հեղափոխության մոտալուտ հաղթանակի մասին քարոզչությամբ: Այսպես Ռուսաստանյան կայսրությանը փոխարինեց ԽՍՀՄ-ը, որի կազմի մեջ 1940 թ. բռնությամբ մտցվեց նաև Մերձբայթիկան:

Խորհրդային պետության գոյության 70 տարիների ընթացքում իրականացվեցին հրեկայանաշտաբ տնտեսական, քաղաքական, մշակութային միջոցառումներ ազգային հարցը վերջնականապես լուծելու համար: Այդ միջոցառումների հիմնական նպատակն էր արմատախիլ անել ազգայնականությունը, ջնջել ազգային տարբերությունները ԽՍՀՄ ժողովուրդների միջև և ռուսաց լեզվի ու ռուսական մշակույթի հիման վրա ստեղծել նոր՝ խորհրդային ժողովուրդ՝ միասնական սոցիալիստական տնտեսությամբ, նրան տալով ազգերին բնորոշ ընդհանրություններ: Այդ նպատակով իրականացվեցին նույնիսկ ժողովուրդների բռնի տեղահանումներ: Մեծ քանակությամբ ռուսներ վերաբնակեցվեցին Մերձբայթիկայում և Միջին Ասիայում: Ոչ մի կերպ չհիմնավորված պատմական այս փորձարկումը ավարտվեց անհաջողությամբ, և մենք 1991 թ. օգոստոսյան դեպերից հետո սկանառես եղանք կայսրության երկրորդ փլուզմանը, որը տեղի ունեցավ կոմունիստական վարչակարգի տապալմանը զուգահեռ: Այժմ Ռուսաստանում նորից քաղաքականացական քաղաքական համակարգ է հաստատվել: Սնկի պես աճող քաղաքական կուսակցությունների ծրագրերում նորից առաջնահերթ տեղ է զբաղեցնում ազգային հարցը, որովհետև այն համոզմունք է, թե միութենական հանրապետություններին անկախություն տալուց հետո հնարավոր կլինի Ռուսաստանը դարձնել ազգային ամուր պետություն, փաստորեն չիրականացավ: Բուռն ազգայնական շարժումներն ընդգրկել են Ռուսաստանյան Դաշնության ողջ տարածքը՝ Պովոմեից մինչև Հյուսիսային Կովկաս և Հեռավոր արևելք: Չեչենները, թաթարները և մի շարք այլ ժողովուրդներ քաղաքական ինքնորոշման պահանջ են դնում: Ռուսաստանյան Դաշնության՝ որպես միասնական պետության, գոյությունը հարցականի տեղ է դրված, որն էլ իր հերթին հանգեցրել է վեյիկոտուսական շովինիզմի բուռն վերելքի: Ռուսաստանի նոր քաղաքական կուսակցությունները ազգային հարցի լուծման և Ռուսաստանյան Դաշնության սխալազանցման տարբեր դեղատոմսեր են առաջարկում: Կոչեր են արվում վերականգնելու կայսրությունը, իսկ Ռուսաստանի խորհրդարանում և այլ քաղաքական ատյաններում միութենական հանրապետությունների անկախության ճանաչումը շատ ռուս քաղաքական գործիչների կողմից ներկայումս որակվում է որպես ռուսական պետության անդամահատում, ւրց այժմ մնացել է առանց ձեռքերի ու ոտքերի:

Ստեղծվել է 1920—22 թթ. իրադրությանը շատ մոտ մի իրավիճակ, որն ամբողջությամբ ըմբռնելու համար պետք է անպայման քաջ ծանոթ լինել դարասկզբից մինչև օրս ազգային հարցի շուրջը սեղվող ռուսական քաղաքական ուժերի սլայքարի պատմությանը, զոհն մոտալուտ իրադարձությունները կանխագուշակելու համար: Սա առավել կարևոր է հատկապես մեզ համար, որովհետև թե առաջին, թե երկրորդ փլուզումներից հետո Հայաստանը հայտնվեց քառացորեն կայսրության փլատակների տակ: Ահա թե ինչու կարևոր համարեցինք ուսումնասիրել և հնարավորին չափ ներկայացնել դարասկզբին ձևավորված ռուսական քաղաքական կուսակցությունների ծրագրերի՝ ազգային հարցին նկիրված դրույթները, մանավանդ որ դրանցից շատերին կարելի է հանդիպել նաև ներկայումս գործող կուսակցությունների և խորհրդարանական խմբակցությունների ծրագրերում:

Դարասկզբին Ռուսաստանի քաղաքական կառուցվածքի առանձնահատկություններից

մեկն այն էր, որ աշխարհի ոչ մի երկրում չստեղծվեցին այնքան կուսակցություններ և կազմակերպություններ, որքան այստեղ՝ առաջին հեղափոխության ընթացքում և նրանից հետո ընկած ժամանակաշրջանում: 1906 թ. Ռուսաստանում արդեն կար 50 կուսակցություն, իսկ 1917-ին՝ 70-ից ավելի²: Ելնելով կուսակցությունների առաջադրած ծրագրերից և նրանց սոցիալ-դասակարգային հենարանից, դրանք կարելի է բաժանել 4 խմբի՝ հետադիմական-պահպանողական, լիբերալ կամ չափավոր-առաջադիմական, արմատական-դեմոկրատական և սոցիալիստական: Հետադիմական-պահպանողական բնույթի կուսակցությունները (հիմնականում՝ կալվածատիրական-միապետական) պայքարում էին կայսրության մեջ գոյություն ունեցող կարգերը պահպանելու, լիբերալ կամ չափավոր-առաջադիմական կուսակցությունները՝ հասարակական-քաղաքական կարգերի մասնակի փոփոխման՝ ահմանադրական միապետության հաստատման համար, արմատական-դեմոկրատական կուսակցությունները՝ հասարակական կարգերի արմատական դեմոկրատացման և բուրժուա-դեմոկրատական հանքապետության հաստատման, իսկ սոցիալիստական ուղղության կուսակցությունները՝ ոչ միայն ինքնակալության տապալման և դեմոկրատական վերափոխումների, այլև սոցիալիստական հասարակության հաստատման համար: Քաղաքական կուսակցություններից յուրաքանչյուրը յուրովի էր մոտենում ազգային հարցի լուծմանը:

Ռուսաստանում քաղաքական իշխանության դեկը իրենց ձեռքում պահող կալվածատեր-ազնվականները ստեղծեցին յոթ կուսակցություն և բազմաթիվ քաղաքական կազմակերպություններ: Ի տարբերություն մյուս ուղղությունների կուսակցությունների՝ արանք զուտ սուսական էին: Ամենախոշոր միապետական կուսակցություններն էին Ռուս ժողովրդի միությունը (հիմնվեց 1905 թ., իսկ 1911 թ. վերանվանվեց Դոկրովիցի անվան Ռուսական ժողովրդական միություն), Միքայել Հրեշտակապետի անվան Ռուսական ժողովրդական միությունը (1907 թ.) Ռուսական միապետական կուսակցությունը (1905 թ., 1911 թ. վերանվանվեց Ռուսական միապետական միություն), Ժողովրդական կենտրոնի ռուսական կուսակցությունը (1906 թ.), Ռուս մարդկանց միությունը (1905 թ.): Միապետական բոլոր կուսակցությունների գաղափարախոսության անկյունաքարը ինքնակալության «վերդասակարգայնության» մասին դրույթն էր, որը հեմվում էր «ինքնակալություն, ուղղափառություն, ժողովրդակաճություն» եռանդամ բանաձևի վրա: Իրենց բոլոր ծրագրային խնդիրները, բնականաբար նաև ազգային հարցին վերաբերող խնդիրները, նրանք բխեցնում էին հենց այս բանաձևից, որը նաև ինքնակալության պաշտոնական տեսակետն էր: Այստեղից էլ ազգային հարցին վերաբերող միապետական կուսակցությունների ծրագրային կետերի մասնությունը և միօրինակությունը: Եթե ընդհանուր հայացքով վերլուծենք այդ կետերը, ապա միապետական կուսակցությունների ազգային-ծրագրերը կարող ենք բնորոշել հետևյալ դրույթներով.

1. Ռուսական կայսրությունը պետք է մնա ամբողջական, և նրա մասնատումը ազգային հատկանիշներով կկործանի ինչպես վելիկոուսներին, այնպես էլ կայսրության մյուս ժողովուրդներին:

2. Վելիկոուս ազգի բացսոխկությունը և նրա գերակայությունը:

3. Հակահրեականություն:

4. Անհանդուրժողականություն կայսրության ոչ ուս ժողովուրդների ազգային շարժումների նկատմամբ: Օրինակ, Ռուս մարդկանց միություն կուսակցության ծրագիրը հենց սկզբում հռչակում էր՝ «Ինքնակալության անբաժանելիությունը համարում էր Ռուսաստանի ռազմագո ժողովուրդների բարօրության պայման»³: Ամենազանգվածային միապետական կուսակցության՝ Ռուս ժողովրդի միության ծրագրի⁴ երկրորդ կետը հռչակում էր Ռուսաստանի «խանությունը և անբաժանելիությունը: Այնտեղ ասված էր, որ Ռուսաստանի անդամատման բոլոր փորձերին պետք է վճռականորեն դիմագրավել, և ինքնավարության մասին ոչ մի խոսք անգամ լինել չի կարող⁵: Վելիկոուսական շփոխվածը դարձավ այդ կուսակցության մարտական կարգախոսը, որը նրա ծրագրի հիմնական սկզբունքն էր: Կուսակցության մոլի ազգայնական քաղաքականությունը, որ արժանացել էր Նիկոլայ Երկրորդի անմիջական գովասանքներին, ուղղված էր բոլոր այլազգիների դեմ, բայց ավելի այլանախակ ու հակամարդկային ձևեր ընդունեց հատկապես հրեաների դեմ: Ռուս ժողովրդի միություն-

² Տե՛ս Յ. Մ. Տպրին. Крушение помещичьих и буржуазных партий в России. М., 1977, էջ 77:

³ Տե՛ս Непоплетарские партии России. Урок истории. М., 1984, էջ 108:

⁴ Կուսակցության ծրագիրը, որը կոչվում էր «Ռուս ժողովրդին», ընդունվեց 1906 թ. սեպտեմբերի 2-ին կուսակցության բաժանմունքների ներկայացուցիչների համառուսաստանյան համագումարում:

⁵ Տե՛ս Յ. Մ. Տպրին, նշվ. աշխ., էջ 160:

նը, որի գլխավոր քաղաքական վարդապետություններից մեկը հակասեմիտիզմն էր, դարձավ 1905—1907 թթ. կազմակերպված հրեական ուղղության կուսակցություններն էին՝ Հոկտեմբերի 17-ի միությունը (1905 թ. հոկտեմբեր-նոյեմբեր), Իրավական կարգի կուսակցությունը (1905 թ.), Առևտրա-արդյունաբերական կուսակցությունը (1905 թ.) և Առաջադիմական տնտեսական կուսակցությունը (1905 թ.)։ Հետագայում վերոհիշյալ կուսակցությունների մեծ մասը ձուլվեց Հոկտեմբերի 17-ի միությունը կուսակցության հետ, որ կոչվեց Օկտյաբրիստների կուսակցություն։ Այս կուսակցությունները հիմնեց ինքնակալության և ազնվականության հետ սերտաճած ռուսական խոշոր բուրժուազիան, որի քաղաքական պահանջները լիովին բավարարում էր 1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստը։

Վերոհիշյալ քաղաքական կուսակցությունների ծրագրերը ինչպես ազգային հարցում, այնպես էլ մյուս հարցերում կամ կրկնում էին օկտյաբրիստներին և կամ առաջադրում համանման դրույթներ։ Ազգային հարցում օկտյաբրիստները շատ մոտ էին կանգնած միապետականներին։ Նրանց ծրագրում հատուկ նշված էր Ռուսաստանյան պետության միասնականության և անբաժանելիության պահպանման անհրաժեշտությունը։ Մերժվում էր նույնիսկ Լեհաստանի ինքնավարությունը։ Ծանաչվում էր միայն Ֆինլանդիայի դրության ասանձմահատկությունը, «որը տալիս էր նրան հաշտի ինքնավարական պետական կառուցվածքը»⁶։ Չէր ճանաչվում մյուս ժողովուրդների նույնիսկ մշակութային ինքնավարությունը։ Օկտյաբրիստների կուսակցության հիմնադիր և անփոփոխ ղեկավար Գուչկովը իր ծրագրային ելույթներում և ճառերում եռանդազին էր պաշտպանում էր ունիտար պետության պահպանման գաղափարը՝ սահմանադրական միապետության ձևով։ Ազգային սեպարատիզմի բոլոր ձգտումների ոչնչացումը Գուչկովը համարում էր առաջնահերթ խնդիր։ Սակայն վերը բավարկված կուսակցությունների սոցիալական հենարանը հանդիսացող առևտրա-արդյունաբերական խոշոր բուրժուազիան կայսրության մեջ իր ազգային կազմով միատարր չէր, ինչպես, օրինակ, ազնվականությունը։ Օկտյաբրիստների և նրանց հարող կուսակցությունների կազմում կային նաև այլազգի կապիտալիստներ, հատկապես լեհերից, հրեաներից, գերմանացիներից, հայերից և մերձբալթյան ժողովուրդներից։ Բացի այդ Ռուսաստանում առաջացել էին նաև ազգային բուրժուական կուսակցություններ, որոնց չէր բավարարում սահմանադրական միապետության պահանջը։ Նրանք իրենց ծրագրերում առաջադրում էին նաև ինքնավարության կամ անկախության հարցը։ Օկտյաբրիստների կուսակցության ղեկավարությունը քննակամաբար չէր կարող անտեսել իր այլազգի համախոհներին և ազգային բուրժուական կուսակցությունների պահանջները, մանավանդ, որ նրանցից շատերը մեծ ազդեցություն ունեին ազգային ծայրամասերի քաղաքական կյանքում։ Նրանցից մի քանիսը նույնիսկ նվաճել էին պատգամավորական տեղեր Պետական դումայում։ Գուչկովը, Ռոժանկոն և օկտյաբրիստների մյուս առաջնորդները ձգտում էին իրենց հետևից տանել այդ բոլոր քաղաքական ուժերը, որի համար էլ համախախի հիշեցնում էին սահմանադրական միապետության հաստատումից հետո կայսրության մեջ ազգային համերաշխության հաստատման անհրաժեշտության մասին, սակայն ազգային լեզուները ազատորեն օգտագործելու վերացական պահանջներից բացի նրանք այլ բան չառաջարկեցին։

Դարասկզբի Ռուսաստանում ձևավորված քաղաքական կուսակցությունների մյուս խումբը արմատական-դեմոկրատական ուղղության կուսակցություններն էր։ Այս կուսակցությունների սոցիալ-դասակարգային հենարանը միջին և մանր բուրժուազիան էր, ինչպես նաև մոավորականությունը, որոնք ձգտում էին Ռուսաստանը տանել արևմտաեվրոպական զարգացած երկրների ուղիով, երկրում մտցնել սահմանադրություն, հռչակել դեմոկրատական իրավունքներ և քաղաքական ազատություններ։ Սրանցից ամենախոշորը Ժողովրդական ազատության սահմանադրական-դեմոկրատական (կադետների) կուսակցությունն էր (1905 թ. հոկտեմբեր)։ Մյուսներից կարելի է նշել Դեմոկրատական ռեֆորմների կուսակցությունը, Սահմանադրականների դեմոկրատական միությունը, Խալաղ վերափոխման կուսակցությունը (1906 թ. այս կուսակցությունը վերակառուցվեց, ստանալով Պրոգրեսիստների կուսակցություն անունը)։

Ստորև կանդրադառնանք միայն կադետների՝ ազգային հարցին նվիրված ծրագրային դրույթներին, որովհետև բացի պրոգրեսիստներից, մյուս կուսակցությունների դերը Ռուսաստանի քաղաքական կյանքում խիստ աննշան էր։ Կադետների կուսակցությունը 1905—07 թթ. ուներ 70—100 հազար անդամ։ Առաջին Պետական դումայի պատգամավորական ակնդերի մոտ 36 տոկոսը, իսկ երկրորդի մոտ 18 տոկոսը պատկանում էր կադետներին⁷։

⁶ S. V. B. B. Комин. История помещичьих, буржуазных и мелкобуржуазных политических партий в Россия. Часть первая (1900—июнь, 1917). Калинин, 1970, էջ 14, 21։

⁷ Л. М. Спириин. Крушение помещичьих и ... с. 139.

⁸ S. V. B. B. Комин, էջ 328։

Այս կուսակցությունը մեծ դեր ուներ Ռուսաստանում, իսկ նրա առաջնորդներ Միլյուկովը, Իշխաններ Պլոտր և Պավել Դոզորովկովները, Մակակովը և Նարոկովը երկրում ճանաչված էին որպես իրավահավասարության և ժողովրդավարության համար պայքարող քաղաքական գործիչներ: Կաղետների ծրագիրը ամենաառաջադիմականն էր Ռուսաստանում մարդու իրավունքների ճանաչման տեսակետից: Այն ավելի առաջադիմական պահանջներ էր առաջադրում ազգային քաղաքականության մեջ: 1905 թ. հոկտեմբերին կուսակցության առաջին համագումարում ընդունված ծրագիրը բաղկացած էր 8 մասից: Առաջին մասը, որ նվիրված էր քաղաքացիների հիմնական իրավունքներին, ազդարարում էր, թե «բոլոր ռուսաստանյան քաղաքացիները, անկախ սեռից, դավանանքից և ազգությունից, հավասար են օրենքի առաջ: Բոլոր դասային տարբերություններն ու լեհերի, հրեաների և առանց քացատության բնակչության մյուս առանձին խմբերի գույքային իրավունքների բոլոր սահմանափակումները պետք է վերացվեն»⁹: Ծրագրի 11-րդ կետը դնում էր Ռուսաստանյան կայսրության մեջ ապրող ազգերին ազատ մշակութային ինքնավարություն տալու հարց: Այն ձևակերպված էր հետևյալ կերպ. «Ռուսաստանյան կայսրության հիմնական օրենքը պետք է կայսրությունում բնակչության բոլոր ժողովուրդներին, բոլոր քաղաքացիների լիակատար քաղաքացիական և քաղաքական իրավահավասարության հետ զուգահեռ տա նաև ազատ մշակութային ինքնավարության իրավունք, որն է՝ տարբեր լեզուների և կենցաղային սովորությունների օգտագործման լիակատար ազատություն, ուսումնական հաստատությունների, միությունների և հիմնարկությունների, ամեն տեսակ ժողովների կազմակերպման ազատություն, որոնք նպատակ ունեն պահպանել և զարգացնել լեզուն, գրականությունն ու յուրաքանչյուր ժողովրդի մշակույթը և այլն»¹⁰: Ծրագրի 25-րդ կետը նախատեսում էր ինքնավարություն և հիմնական թագավորության համար՝ իր սեյմով, պայմանով, որ պահպանվի պետության միասնությունը և երաշխավորվի և հաստատվում բնակչող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնավարությունը¹¹: 26-րդ կետով նախատեսվում էր Ֆինլանդիայի սահմանադրության վերականգնում, որը նրան տալու էր կայսրության կազմում հատուկ պետական կարգավիճակ, ինչը պետք է հանգեցներ ֆիննական մեծ իշխանության և կայսրության դաշնակցային հարաբերություններին¹²: Ինչպես տեսնում ենք, ազգային հարցում կաղետների ծրագիրը շատ ավելի արմատական և դեմոկրատական սյահանջներ էր առաջադրում: Սակայն պետք է նշել, որ նրանք ժողովուրդների քաղաքական ինքնորոշման հարց չէին դնում: Մշակութային ինքնավարությունը կարող էր ազգային հարցը Ռուսաստանում լուծել մասամբ. կարող էր բավարարել միայն այն ազգերին, որոնք ունեին տարածքային ընդհանրություն (ինչպես օրինակ հրեաները) և անկախ պետականության ստեղծման նախադրյալներ: Նույնիսկ լեհերը և ֆինները դժգոհ էին իրենց սրված պետական ինքնավարությունից և ձգտում էին անկախության: Այդ էր վկայում այն իրողությունը, որ Ռուսաստանում գործող կաղետամետ ազգային-բուրժուական կուսակցությունների ծրագրերը կաղետների ծրագրից տարբերվում էին միայն ազգային հարցի լուծման իրենց տարբերակներով: Այդ կուսակցությունների ծրագրերում դրվում էր ոչ միայն մշակութային ինքնավարության, այլև քաղաքական ինքնորոշման պահանջը: Այսպես օրինակ, Ուկրաինական ռադիկալ դեմոկրատական կուսակցության ծրագրում խոսվում էր օրենսդրական իշխանության օժտված ազգային մերկալացուցական մարմնի՝ ուկրաինական ժողովրդական ռադայի ստեղծման մասին, որը պետք է ընդուներ տեղական օրենքները, տնօրիներ բյուջեն, ժողովրդական կրթությունը, ստողչապահությունը, տեղական դատարանները: Լեհական Առաջադիմական-դեմոկրատական կուսակցության ծրագիրը նախատեսում էր լեհական թագավորության ժողովրդական մերկալացուցական մարմնի՝ սեյմի ըստեղծում, որի իրավասության տակ էր գտնվելու թագավորության ողջ վարչական, տնտեսական, դատական և հարկային իշխանությունը: Լիտվայի դեմոկրատական կուսակցության ծրագիրը առաջնային խնդիր էր համարում ինքնիշխան պետության ստեղծումը: Նույնպիսի խնդիրներ էին առաջադրում Լատվիական դեմոկրատական կուսակցությունը, Էստոնական սրբորենաստների կուսակցությունը և կաղետներին հարող մյուս ազգային կուսակցությունները: Չհայած այս տարածայնություններին՝ ազգային շրջաններում կաղետները կարողացան դաշինք կնքել ազգային բուրժուական կուսակցությունների հետ առաջին և երկրորդ Պետական դումաների նախընտրական մրցարշավի ընթացքում: Ըստ էության ռուսական բուրժուազիայի երկու խոշոր քաղաքական կուսակցությունները՝ կաղետները և օկտյաբրիստ-

⁹ Программы политических партий в России. Под. ред. И. В. Владиславлева. М., 1917, с. 69.

¹⁰ Նույն տեղում, էջ 71:

¹¹ Տե՛ս նույն տեղը, էջ 74:

¹² Տե՛ս նույն տեղը:

ները, հանդես էին գալիս կայսրության ամբողջականության պահպանման օգտին: Ազգային հարցում նրանց դիրքորոշման տարբերությունն այն էր, որ ըստ օկտյաբրիստների՝ Ռուսաստանի բոլոր ժողովուրդներին մեկ ազգի մեջ ձուլել կարող էր միայն միապետությունը՝ առանց որևէ ինքնավարության, իսկ ըստ կադետների՝ մշակութային ինքնավարությունը պետք է կանգնեցներ ազգային շարժումները, որից հետո ազգային միջնորմները չհնդող ուսաստանյան կապիտալը կաներ իր գործը: Երկու կուսակցությունների ծրագրերում էլ բացահայտորեն երևում է վեկիլոտուսական շուվինիզմի կնիքը, իսկ կադետների ծրագրում առկա որոշակի ժողովրդավարական պահանջները բացատրվում են ուսական լիբերալ բուրժուազիայի ձգտմամբ՝ միասնական պետությունը պահպանելու համար որոշակի զիջումներ անել ոչ ուս ժողովուրդների ազգային բուրժուազիային:

Ինչպես նշեցինք, դարասկզբին Ռուսաստանի քաղաքական կուսակցությունների չորրորդ խումբը կազմում էին սոցիալիստական ուղղության կուսակցությունները, որոնք ավելի շատ էին ու ավելի բազմաճյուղ: Սրանք առավել զանգվածային քաղաքական կուսակցություններ էին և մեծ ազդեցություն ունեին ժողովրդական լայն զանգվածների վրա: Սոցիալիստական ուղղության համառուսաստանյան քաղաքական կուսակցություններն էին՝ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը (1903 թ.), Սոցիալիստ-Ռեզոլյուցիոնալներին (Էսեռներին) կուսակցությունը (1902 թ.), Սոցիալիստ-Ռեզոլյուցիոնալներին-մաքսիմալիստներին միությունը (1906 թ.) և Ժողովրդական-սոցիալիստական (Էնեսեռներին) կուսակցությունը (1906 թ., 1917 թ. վերանվանվեց Աշխատանքային ժողովրդական-սոցիալիստական կուսակցություն): Սրանցից բացի կային նաև բազմաթիվ ինքնուրույն կազմակերպություններ և խմբակներ, որոնք հարում էին այս կուսակցությունների տեղական կազմակերպություններին: Ծայրամասերում գործում էին նաև ազգային սոցիալ-դեմոկրատական և սոցիալիստական կուսակցություններ, որոնք մեծ մասամբ ավելի վաղ էին կազմավորվել:

ՌՍԴԲԿ ծրագիրը ընդունվեց կուսակցության 1903 թ. երկրորդ համագումարում: Ծրագրի առաջին մասը, որն ստացավ միմիում ծրագիր անունը, նախատեսում էր ինքնակալության տապալում և դեմոկրատական հանրապետության հիմնում: Այնուհետև 14 կետով բնութագրվում էին այն առաջնահերթ խնդիրները, որոնց լուծումը պետք է ապահովեր այդ հանրապետության սահմանադրությունը: Դրանցից 4-ը ուղղակի կամ անուղղակի վերաբերում էին ազգային հարցին: Երրորդ կետով նախատեսվում էր լայն տեղական ինքնավարություն այն մարզերի համար, որոնք առանձնահատուկ կենցաղային պայմաններ և բնակչության կազմ ունեին: Յուրերորդ կետով նախատեսվում էր բոլոր քաղաքացիների իրավահավասարությունը՝ անկախ սեռից, կրոնից, ռասայից և ազգությունից. Ութերորդ կետով նախատեսվում էր բնակչության մայրենի լեզվով կրթություն ստանալու և դպրոցներ ունենալու իրավունքը, յուրաքանչյուր քաղաքացու իրավունքը ազատորեն օգտագործելու ազգային լեզուն, պետական լեզվին զուգահեռ ազգային լեզուների ազատ օգտագործումը տեղերում: Իններորդ կետը, որը առանցքային նշանակություն ուներ ՌՍԴԲԿ ազգային ծրագրում, ձևակերպված էր այսպես. «Պետության կազմի մեջ մտնող բոլոր ազգերի ինքնուրույն իրավունք»¹³: Տարբեր ազգերի քաղաքացիների իրավահավասարության և ազգային լեզուների ազատ օգտագործման պահանջները ինքնուրույն իրավունքների էին: Սակայն բոլորովին հստակեցված չէին մարզային ինքնավարության և ազգերի ինքնորոշման իրավունքի մասին դրույթները: Ծրագրում չէր պարզաբանվում, օրինակ, թե մարզային ինքնավարությունը արդյո՞ք Ռուսաստանի կազմի մեջ մտնող ժողովուրդների պետական ինքնավարություն էր և մնալու՝ էր Ռուսաստանը կենտրոնացված պետություն, թե դառնալու էր ազգային ինքնավար կազմավորումների դաշնակցություն: Պարզաբանված չէր, թե ազգերի ինքնորոշումը արդյո՞ք նշանակում էր քաղաքական ինքնորոշում և ազգային պետականություն հաստատելու իրավունք. և ինչպես պետք է իրագործվեր այն: Այնուհանդերձ պետք է հանուն արդարության նշել, որ ՌՍԴԲԿ-ն առաջին քաղաքական կուսակցությունն էր, որ իր ծրագրի մեջ առաջադրեց Ռուսաստանի բոլոր ժողովուրդների ինքնորոշման իրավունքի պահանջը: Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին դրույթը ՌՍԴԲԿ ծրագրի մեջ մտցնելը հետոյն զնացող նպատակներ էր հետապնդում: Բանն այն է, որ կայսրության ազգային ծայրամասերում ձևավորվել էին սոցիալ-դեմոկրատական բազմաթիվ կուսակցություններ, որոնց հետ համագործակցությունը վճռական նշանակություն ուներ ՌՍԴԲԿ-ի՝ հանուն իշխանության մղվող պայքարում: Հրեական, լեհական, լիտվական, հայկական (նկատի ունենք Հնչակյան կուսակցությունը), ուկրաինական և մյուս ազգային սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները ստեղծվել էին ՌՍԴԲԿ-ից առաջ, ար-

¹³ ՌՍԴԲԿ ծրագիրը ամբողջությամբ տե՛ս ՌԻՍՍ в резолюциях и решениях съездов, конференций и пленумов ЦК. Ч. I, М., 1954, էջ 37-43:

դէն քաղաքական անկեզալ պայքարի որոշակի փորձ ունէին, փաստորեն համաեվրոպական համաշուրմ էին ստացել՝ համագործակցելով Երկրորդ ինտերնացիոնալի հետ: Ազգերի ինքնորոշման իրավունքը կարող էր դառնալ ինքնակալութեան տապալման համար մղվող պայքարում ազգային սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները միավորող միջոցը: Սակայն այդ համախմբումը ինչպէս դարակզբին, առաջին ռուսական հեղափոխութեան տարիներին, նույնպէս և հետագայում չստացվեց: Իրա պատճառները շատ էին: Նախ՝ ՌՄԴԲԿ-ն 1903 թ., իր հիմնադիր համագումարից շատ կարճ ժամանակ անց պառակտվեց, առաջացան մենշևիկների և բոլշևիկների կուսակցական խմբավորումները, որոնք գործում էին ինքնուրույն, բայց մինչև 1912 թ. ձևականորեն դեռ մնում էին միևնույն կուսակցութեան մէջ: Մենշևիկները առանձնակի հետեւողականութիւն չցուցաբերեցին ազգային հարցում կուսակցութեան քաղաքականութեան հետագա մշակման ուղղութեամբ, նրա լուծումը կապելով Ռուսաստանում դեմոկրատական հասարակարկութեան հաստատման հետ: Իսկ բոլշևիկները սկզբից եւթ դասակարգային զգեստ հագցրին ազգերի ինքնորոշման իրավունքի պահպանման: Հետագայում գրված իր մի շարք աշխատութիւններում բոլշևիկների առաջնորդ Լենինը, վերլուծելով կուսակցութեան ազգային ծրագիրը և մեկնաբանելով նրա դրույթները, նշում էր, որ ազգերի ինքնորոշման իրավունքը և ազգային պետութիւնների գոյացումը պետք է պաշտպանել՝ կլնելով բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի շահերից: Նա նշում էր, որ ոչ մի երաշխիք չպետք է տուլ ոչ մի ազգի, թէ կճանաչվի նրա քաղաքական ինքնորոշումը, եթէ դա նպատակահարմար չլինի պրոլետարական հեղափոխութեանը¹⁴: Ի հակադրութիւն այս մտեցման՝ ազգային սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների մեծ մասի ծրագրերում առաջնայինը ազգային ազատագրութեան հարցն էր: Սոցիալիստական հեղափոխութեան խնդրին երկրորդական տեղ էր տրվում: Նման ծրագրային դրույթներ ունէին էստոնական, լիտվական, լատիշական, հրեական, հայկական, ուկրաինական և լեհական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունները¹⁵. Գարգ է, որ մեան քաղաքական դիրքորոշումների դեպքում համագործակցությունը ռուսական և ազգային սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների միջև բավականին դժվար էր լինելու:

Սոցիալիստ-հեղափոխականների կուսակցութեան ծրագիրը ընդունվեց կուսակցութեան ստաջին համագումարում (1905 թ. դեկտեմբեր—1906 թ. հունվար): Էստոնների ծրագրում ազգային հարցին նվիրված դրույթները տարրալուծված էին քաղաքական և իրավական բնագավառում նախատեսվող ռեֆորմների մեջ և սերտորեն կապված էին մարդու և քաղաքացու իրավունքների ճանաչման հետ: Համընդհանուր և հավասար ընտրական իրավունք էր նախատեսվում 20 տարին լրացած բոլոր քաղաքացիների համար՝ անկախ ազգութիւնից և դավանանքից: Հնարավոր էր համարվում կայսրութեան մեջ ապրող ազգությունների միջև դաշնակցային հարաբերութիւնների հաստատումը, և անառարկելիորեն ճանաչվում էր ազգերի ինքնորոշման իրավունքը: Դրվում էր տեղերում ազգային լեզուների սզատ օգտագործման պահանջը հասարակական և պետական հիմնարկութիւններում: Ճանաչվում էր յուրաքանչյուր ազգի իրավունքը իր թվաքանակին համապատասխան որոշակի ուսման ստանալ պետական քննութից՝ մշակութային-լուսավորչական նպատակների համար¹⁶: Ինչպէս տեսնում ենք, ՌՄԴԲԿ ծրագրի մասն, Էստոնների ծրագրում նույնպէս լիովին պարզարանված չէր ազգերի ինքնորոշման իրավունք հասկացությունը: Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին նման մշտնապարտ դրույթները Ռուսաստանի քաղաքական կուսակցությունների ծրագրերում հետևանք էր այն իրողութեան, որ այս կուսակցությունների ստաջնորդները և գաղափարախոսները վերջնականապէս չկարողացան կողմնորոշվել, թէ կայսրութեան մեջ ապրող ժողովուրդներից որի քաղաքական ինքնորոշումը կարելի է ճանաչել, որին կարելի է պետական ինքնավարութիւն տալ և որին կարելի է բավարարել՝ մշակութային ինքնավարութիւն ընձեռնելով: Այս ամենի տակ թաքնված էր այն հարցը, որը դարակզբից մինչև օրս տանջում է ռուսական քաղաքական միտքը. հնարավոր է սրդորք Ռուսաստանի գոյութիւնը որպէս միազգային պետութիւն, թէ նրան վիճակված է ընդմիջումնալ քազմազգ կայսրութիւն: Այն մտավախութիւնը, թէ ռուսներին շատ քիչ բան կմնա իրենց հսկայածավալ պետութիւնից, եթէ բոլոր ազգերը սկսեապէս հասնեն քաղաքական ինքնորոշման և ձեռք բերեն իրենց պետականութիւնը, իր խոր կնիքը թողնո ռուսական բոլոր քաղաքական կուսակցությունների՝ ազգային հարցին նվիրված ծրագրային դրույթ-

¹⁴ Տե՛ս Վ. Ի. Լենին, Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին, Երկեր, 5-րդ հրատ., հ. 25, էջ 329:

¹⁵ Տե՛ս Մ. Ի. Басманов, К. В. Гусев, В. А. Полушкина. Сотрудничество и борьба. Из опыта отношений КПСС с непролетарскими и некоммунистическими партиями. М., 1988, էջ 16—21:

¹⁶ Տե՛ս Программы политических партий в России, էջ 49:

ների վրա: Աղցիախտական ուղղության մյուս կուսակցությունների ծրագրերում այս պատճառով շրջանցվում էր ազգերի ինքնորոշման իրավունքը: Այսպես օրինակ, ժողովրդական-աղցիախտական (էնէսների) կուսակցության ծրագրում խոսվում էր միայն բոլոր ազգերի քաղաքացիների իրավահավասարության և մարզային ազգային ինքնավարության մասին¹⁷:

Այսպիսին էին դարասկզբին ձևավորված Ռուսաստանի առավել խոշոր քաղաքական կուսակցությունների ծրագրային դրույթները ազգային հարցի վերաբերյալ: Իհարկե, հետագայում նրանք ենթարկվեցին որոշակի փոփոխությունների, բայց դրանք էական չէին, և սկզբունքորեն ազգային ծրագրերի էությունը չփոխվեց: Անշափ կարևոր է ուսական կուսակցությունների գործնական ազգային քաղաքականության լուսաբանումը, սակայն դա ուսումնասիրության կարճատև այլ խնդիր է:

Г. М. КЕРЯН — Национальный вопрос в программах политических партий России (1900—1907). — Национальный вопрос был вторым основным вопросом в программах всех политических партий России. Это объяснялось тем, что российское государство изначально складывалось как многонациональное образование. Крупные всероссийские политические партии сформировались в 1900—1907 гг. Консервативные настаивали на сохранении территориальной целостности Российской империи и ставили перед собой задачу решительно препятствовать всем национальным движениям. Либеральные и радикально-демократические партии тоже признавали необходимость сохранения целостности государства, но считали возможным сделать некоторые уступки нерусским нациям предоставлением им ограниченного государственного самоуправления и культурно-национальной автономии. Социалистические партии в своих программах, наряду с общими требованиями равноправия наций, выдвигали лозунг о праве наций на самоопределение, однако эти положения не были до конца уточнены.

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 59, 60: